

Թեմայի վերնագիրը՝

Գյուղատնտեսական թունաքիմիկատների միկրո-էմուլսիոն և միկրո-սուսպենզիոն պատրաստուկային ձևերի ստեղծման տեխնոլոգիայի մշակում և նմուշների պատրաստում

Կազմակերպության անվանումը՝

ՀՀ ԿԳՆ «Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան (Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ

Թեմայի ղեկավարը՝

Միքայելյան Արամ Ռազմիկի

Գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի ժամանակակից միջոցների ստեղծման կարևոր ուղղություններից է օրգանական լուծիչներ չպարունակող (կամ դրանց մինիմալ պարունակությամբ) պատրաստուկային ձևերի մշակումը: Առաջարկվող նախագծի նպատակն է մի շարք ինսեկտիցիդային ակտիվությամբ նյութերի հիման վրա (իմիդակլոպրիդ, ցիպերմետրին, քլորպիրիֆոս) ստեղծել ջրային հենքով, բարելավված ցուցանիշներով միկրո-էմուլսիոն, միկրո-սուսպենզիոն պատրաստուկային ձևեր, մշակել դրանց ստացման տեխնոլոգիան և կազմակերպել փորձնական արտադրություն: Նախատեսվում է նաև.

- տեղական հումքի և արտադրությունների թափոնների հիման վրա մշակել կենսաքայքայման ենթարկվող հավելանյութերի սինթեզի մատչելի եղանակներ և տեխնոլոգիաներ,
- բավարար կայուն պատրաստուկային ձևերի համար իրականացնել թունաբանահիգիենիկ հետազոտություններ և դաշտային փորձարկումներ ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում,
- կազմել փաստաթղթային փաթեթ՝ պետական գրանցում ստանալու համար: